ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԱՏԹԵՈՍ ՔԱՀԱՆԱ ԳՅՈՒՋԵԼՅԱՆԻ
(1874—1959)

Երկարատև և ծանր հիվանդությունից հետո, հունվարի 2-ին, Երևանում, ի Տեր հանգյավ արժանապատիվ Տ. Մատթեոս քահանա Գյուղելյանը, ալեզարդ հասակում։

Հանգուցյալը ծնվել է 1874 թվականի հունվարի 21-ին, Մուսա լեռան Քեբուսիե գյուղում, հողագործի ընտանիքում։ Իր նախնական կրթությունն ստացել է գյուղի ծխական դպրոցում, ապա ինքնաշխատությամբ կարողացել է ձեռք բերել հոգևորական առպարեզի անհրաժեշտ եկեղեցական և ծխական գիտելիքներ։

1911 թվականին նա քահանա է ձեռնադրվում Սսի մայրավանքում։ Այդ օրվանից նա իր համեստ ուժերը, առանց սակարկության, նվիրաբերում է իր եկեղեցուն և ժողովրդին։ Խաչի և Ս. Ավետարանի հետ, իր ձեռքում նա փայփայել է նաև բահն ու բրիչը և իր ապրուստը շահել է իր սիրած հողի մշակությամբ, իր ճակատի արդար քրտինքով։ Իբր քաջ և անձնվեր հովիվ, նա եղել է միշտ իր ժողովրդի հետ, հատկապես 1915 թվականի հայկական բռնագաղթի և տեղահանության օրերին։ Հնարավորություն չունենալով Մուսա լեռ բարձրանալ իր ժողովրդի մեծ զանգվածի հետ, իր համագյուղացիների հետ տարագրվել է, կրելով անլուր զրկանքներ և չարչարանք։

Մեծ աղետից հետո վերադարձել է իր ծննդավայրը և նվիրվել է իր հոտի հովվությանը։ Նա իր կոչման գիտակից և պարտաճանաչ հոգևորական էր։ Նա հասնում էր ամեն տեղ, Մուսա լեռան թեկուզ ամենահեռավոր գյուղերը, տանելու համար հոգևոր մխիթարություն իր հավատացյալ և սիրելի ժողովրդին։

1939 թվականին Տ. Մատթեոս քահանան իր ժողովրդի հետ ծննդավայրից տեղափոխվեց Լիբանանի Այնճար բնակավայրը, իսկ 1947 թվականին, իր ժողովրդի գլուխն անցած, եկավ Մայր Հայրենիք։

Հանգուցյալը եղել է անսահմանորեն բարի, ազնիվ, անբասիր և համեստ հովվերական, սիրել է իր ժողովրդին և սիրվել նրանից։

Հունվարի 3-ին, հետմիջօրեի ժամը 2-ին, կատարվեց հանգուցյալի լվացումն ու քահանայաթաղի տանկարգը։ Ապա դագաղը թափորով տարվեց Երևանի Ս. Սարգիս եկեղեցին։

Կիրակի, հունվարի 4-ին, Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը պատարագեց Ս. Սարգիս եկեղեցում և կատարեց վերջին օծումը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի բարեհաճ թույլտվությամբ. հանգուցյալի աճյունը փոխադրվեց Ս. Էջմիածին և թաղվեց Ս. Գայանեի վանքում, միաբանության գերեզմանոցում։

Հավիտենական հանգի՜ստ իր հոգուն։

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։